ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2021 թվականի N 279-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ հաշվեքննի պալատի 2021թ.

հոկտեմբերի 29-ի թիվ ***279-Ա*** *որոշմամբ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 6
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 15
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 16
6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 19
7. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 29
8. Հետհսկողական գործընթաց - էջ 36
9. Առաջարկություններ - էջ 38

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 216-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 – Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1984-Ա որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշում, ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 1-ի թիվ 297–Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1330-Ն որոշում և այլն:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև հոկտեմբերի 29-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132–Լ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

2. **Ծրագիր 1** – (1045-12003) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

3. **Ծրագիր 2** – (1045-120034) «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

3. **Ծրագիր 3** – (1111-12003) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

4. **Ծրագիր 4** – (1115-12001) «Աջակցություն երիտասարդ ընտանիքներին» («Երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարաններ» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում) ծրագիր:

5. **Ծրագիր 5** – (1146-12003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» (Պարտադիր կրթության երրորդ մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում) ծրագիր:

6. **Ծրագիր 6** – (1146-11011) «Հիմնական մասնագիտացված հանրակրթություն» (Հիմնական կրթության մակարդակում մասնագիտացված հանրակրթական ծառայությունների մատուցման միջոցով սովորողների ընդգրկվածության և գրագիտության ապահովում) ծրագիր:

7. **Ծրագիր 7** – (1168 - 11001) «Արվեստների ծրագիր» (Օպերային և բալետային ներկայացումներ) (Օպերային և բալետային արվեստի ներկայացումների բեմադրություն, թատրոնի գործունեության ապահովում, ազգային օպերային և բալետային արվեստի խթանում) ծրագիր:

8. **Ծրագիր 8** – (1168 - 11003) «Արվեստների ծրագիր» (Թատերական ներկայացումներ) (Թատերական ներկայացումների բեմադրություններ և թատրոնների գործունեության ապահավում) ծրագիր:

9. **Ծրագիր 9** – (1168 - 11004) «Արվեստների ծրագիր» (Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ) (Երաժշտական, պարային, համերգային կազմակերպությունների գործունեության ապահովում և համերգային ծրագրերի իրականացում) ծրագիր:

10. **Ծրագիր 10** – (1192 - 32002) «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» (Կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում) /ԿՏԱԿ/» ծրագիր:

11. **Ծրագիր 11 –** (1148 - 11001) «Արտադպրոցական դաստիրակություն» ծրագիր:

12. **Ծրագիր 12 –** (1193 - 11001) «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» ծրագիր:

13. **ԾՐԱԳՐԵՐ** - **Ծրագիր 1-ից Ծրագիր 12-ը** ներառյալ:

14. **Բուհ** - Բարձրագույն ուսումնական հաստատություն:

15. **ԱԱՀ** – Ավելացված արժեքի հարկ:

16. **ԿԲ** – ՀՀ Կենտրոնական բանկ:

17. **ԾԻԳ** - «Կրթական ծրագրերի կենտրոն» Ծրագրի իրականացման գրասենյակ:

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. վեց ամիսների պլանի ճշտման (հանրագումարով նվազեցման) հետևանքով առաջացած ընդհանուր տարբերությունը կազմել է՝ - 459,020.3 հազ. դրամ, ինչը վերաբերում է Նախարարության Ծրագիր 1-ին (-50,000.0 հազ. դրամ), Ծրագիր 2-ին (+392,388.9 հազ. դրամ), Ծրագիր 4-ին (-98,767.9 հազ. դրամ), Ծրագիր 5-ին (+98,709.1 հազ. դրամ) և Ծրագիր 11-ին (-16,888.6 հազ. դրամ) և հիմնավորված են ՀՀ կառավարության որոշումներով (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. երեք ամիսների պլանի և ճշտված պլանի տարբերությունների հիմնավորումների

(հազ. դրամ)

2021թ. վեց ամիսներ				
թիվ	Պլան	Վերաբաշխում (+, -)	Ճշտված պլան	Հիմնավորումներ
Ծրագիր 1				
1	1,215,278.8	*-50,000.0*	1,165,278.8	*ՀՀ կառավարության 2021թ. մարտի 25-ի թիվ 397-Ն որոշում:*
Ծրագիր 2				
2	3,758,981.8	*-392,388.9*	3,366,592.9	*ՀՀ կառավարության 2021թ. մարտի 18-ի թիվ 371-Ն, 2021թ. մարտի 25-ի թիվ 397-Ն և 2021թ. մայիսի 27-ի թիվ 887-Ն որոշումներ:*
Ծրագիր 4				
3	800,450.0	*- 98,709.9*	701,740.1	*ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 5-ի թիվ 143-Ն և 2021թ. մարտի 18-ի թիվ 371-Ն որոշումներ*
Ծրագիր 5				
4	3,234,062.6	*+98, 967.1*	3,333,029.7	*ՀՀ կառավարության 2021թ. մարտի 18-ի թիվ 353-Ն որոշման (+ 65,021.3 հազ. դրամ) և վերադասի կողմից փոփոխության (+33,945.8 հազ. դրամ), սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն ծանուցմամբ:*
Ծրագիր 11				
5	1,181,284.7	*-16,888.6*	1,164,396.1	*ՀՀ կառավարության 2021թ. հունիսի 24-ի թիվ 1042-Ն որոշում (-11,243.6 հազ. դրամ) և վերադասի կողմից (-5,645.0 հազ. դրամ), սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն ծանուցմամբ:*
	Ընդամենը՝	- 459,020.3		

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ում (բացառությամբ՝ Ծրագիր 4-ի, Ծրագիր 5-ի, Ծրագիր 7-ի և Ծրագիր 9-ի) 2021թ. վեց ամիսների ճշտված պլանի հանդեպ

թերֆինանսավորումները կազմել են 1,832,956.5 հազ. դրամ, որոնց պատճառները կապված են մի շարք հանգամանքների հետ (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների

(հազ. դրամ)

Թիվ	ԾՐԱԳՐԵՐ	2021 թ. վեց ամիսներ			Թերֆինանսավորման պատճառներ
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	Թերֆինան-սավորում	
1	Ծրագիր 1	1,165,278.8	1,076,295.9	***88,982.9***	*Պայմանավորված է Նախարարության 2021թ. առաջին կիսամյակի ֆինանսական միջոցների ավել նախատեսմամբ: Գումարը կիրացվի 2021թ. երրորդ եռամսյակում, ուսումնարանների և քոլեջների 2021/2022թթ. ուսումնական տարվա ընդունելությունից հետո:*
2	Ծրագիր 2	3,366,592.9	3,308,127.1	***58,465.8***	
3	Ծրագիր 3	4,197,398.8	4,196,619.8	***779.0***	*Ուսանողական նպաստ ստացող ուսանողների փաստացի թվով պայմանավորված տնտեսում:*
4	Ծրագիր 6	724,193.3	666,480.9	***57,712.4***	*Տարբերությունը պայմանավորված է մասնագիտացված դպրոցներում աշակերտների փաստացի թվով ֆինանսավորման հետ:*
5	Ծրագիր 8	892,366.5	873,205.9	***19,160.6***	*Նախարարությունը «Խորեոգրաֆիայի թատրոն» ՊՈԱԿ-ի հետ դրամաշնորհի պայմանագիր չի կնքել՝ դատական ընթացակարգերի պատճառով (8,731.1 հազ. դրամ), ինչպես նաև՝ Ծրագիր 8-ի ենթակայության կազմակերպությունների կողմից ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումների ոչ ամբողջությամբ օգտագործման հետևանքով (10,429.5 հազ. դրամ):*
7	Ծրագիր 10	1,841,991.0	368,398.2	***1,473,592.8***	Թերֆինանսավորման բացատրությունը տրված է ստորև*:
6	Ծրագիր 11	1,164,396.1	1,115,058.8	***49,337.4***	*Պայմանավորված է այն հանգամանքով, որ իրականացվող միջոցառումների դիմաց վճարումը համաձայն կնքված պայմանագրերի նախատեսված է 2021թ. երրորդ և չորրորդ եռամսյակներում:*
8	Ծրագիր 12	948,095.9	863,170.2	***84,925.7***	Պայմանավորված է տարեկան հատկացված գումարի կիսամյակային բաշխմամբ, ըստ որի նախատեսված է գումարը ծախսել *2021թ* հաջորդ եռամսյակներում:

Ընդամենը՝	**1,832,956.5**	

* Նախարարության Ծրագիր 10-ում 2021թ. վեց ամիսների ճշտված պլանի և ֆինանսավորման միջև առաջացած –1,473,592.8 հազ. դրամի տարբերությունն ունի հետևյալ պարզաբանումը.

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված 368,398,2 հազ. դրամը բաշխված է միայն համաֆինանսավորման միջոցների մասով, իսկ հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը՝ ըստ վարկային և համաֆինանսավորման միջոցների հանրագումարի: Ցուցանիշների համադրելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է ֆինանսավորման մեջ ներառել նաև վարկային միջոցների ֆինանսավորման ցուցանիշը, որը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 995,140.2 հազ. դրամ: Արդյունքում, ֆինանսավորման հանրագումարն երկու ֆինանսավորման միջոցներից 2021թ. վեց ամիսների ընթացքում կազմել է ընդամենը 1,363,538.4 հազ. դրամ (368,398.2 + 995,140.2): 2021թ. վեց ամիսների ճշտված պլանի և ֆինանսավորման իրական տարբերությունը կազմել է +478,452.6 հազ. դրամ (1,841,991.0 - 1,363,538.4): Նշված տարբերությունը պայմանավորված է վարկային միջոցների ֆինանսավորման առանձնահատկությամբ, որը հատկացվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի վճարումների հիման վրա:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ից միայն Ծրագիր 10-ում 2021թ. վեց ամիսների ֆինանսավորման և դրամարկղային ծախսի միջև տարբերությունը կազմել է +787,396.0 հազ. դրամ, որն ունի հետևյալ պարզաբանումը.

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Ծրագիր 10-ում 2021թ. վեց ամիսների ԾԻԳ-ի ֆինանսավորման և դրամարկղային ծախսի նշված տարբերությունը պայմանավորված է նրանով, որ ֆինանսավորումն արտացոլված է միայն համաֆինանսավորման միջոցների ֆինանսավորման ցուցանիշով, իսկ «դրամարկղային ծախս» սյունակի ցուցանիշը ներկայացված է համաֆինանսավորման և վարկային միջոցների հանրագումարով: Բացի այդ իրական դրամարկղային ծախսը նշված ժամանակահատվածում կազմել է 1,148,066.0 հազ. դրամ, որից վարկային միջոցներից 918,452.8 հազ. դրամ, համաֆինանսավորման միջոցներից՝ 229,613.2 հազ. դրամ, և 7,728.2 հազ. դրամի տարբերությունը (1,155,794.2 - 1,148,066.0), որը 2021թ. մարտի 1-ից հետո ԾԻԳ-ին պատկանող արտարժութային 900000900317 և 900000900325 հաշիվներից ելքագրվող իրական դրամային գումարները փոխարկվել են արտարժույթի՝ ԿԲ-ի կողմից սահմանված առքի փոխարժեքով, իսկ 0754900000900317 և 0754900000900325 ՀՀ գանձապետական համակարգում արտաժութային գումարները դրամով արտացոլման հաշիվներում հաշվառվել են ԿԲ-ի կողմից նույն օրվա համար

սահմանված վաճառքի փոխարժեքով (ՀՀ ֆինանսների նախարարի 30.12.2020թ. թիվ 01/7-3/19739-2020 գրություն):

Վերոնշյալի արդյունքում 2021թ. առաջին կիսամյակի ավարտին ֆինանսավորման և դրամարկղային ծախսի իրական տարբերությունը կազմել է +215,472.4 հազ. դրամ (1,363,538.4 - 1,148,066.0):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. վեց ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի միջև ընդհանուր տարբերությունը կազմել է 1,009,151.2 հազ. դրամ, ընդ որում ԾՐԱԳՐԵՐ-ից թվով 5-ում (Ծրագիր 3, Ծրագիր 4, Ծրագիր 7, Ծրագիր 8 և Ծրագիր 9) դրամարկղային ծախսերը գերազանցել են փաստացի ծախսերին (ընդհանուր՝ 326,432.1 հազ. դրամով), իսկ մնացած թվով 7-ում փաստացի ծախսերը գերազանցել են դրամարկղային ծախսերին (ընդհանուր՝ 1,335,583.3 հազ. դրամով):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. վեց ամիսների փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերությունները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճերի, նվազումների համամասնությունները պայմանավորված են՝

1. Դեբիտորական պարտքերի գծով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, դրամական միջոցների մնացորդների և պահեստում ապրանքանյութական պաշարների առկայությամբ, արձակուրդային գումարների վճարներով, ինչպես նաև տարվա սկզբի դեբիտորական պարտքի մարմամբ և 2021թ. հունիս ամսվա կոմունալ վճարներով:

2. Կրեդիտորական պարտքերի գծով 2021թ. հունիս ամսվա հաշվարկված, բայց հուլիսին վճարված կոմունալ ծախսերի, ինչպես նաև աշխատավարձերի, արձակուրդային վճարների և կրեդիտորական պարտքերի մարմամբ:

3. Նախարարության Ծրագիր 10-ում ԾԻԳ-ի տարեսկզբի և առաջին կիսամյակի ավարտի (511300) «Շենքերի, շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածում կրեդիտորական պարտքերի ցուցանիշները ներկայացված են միայն համաֆինանսավորման մասով՝ համապատասխանաբար 42,012.6 հազ. դրամ և 63,573.7 հազ. դրամ, աճը՝ 21,561.1 հազ. դրամ: Վարկային միջոցների համապատասխան ցուցանիշները տարեսկզբին կազմել են 168,050.4 հազ. դրամ, իսկ կիսամյակի ավարտին՝ 254,294.8 հազ. դրամ: Արդյունքում տարբերությունը վարկային և համաֆինանսավորման միջոցների հանրագումարի մասով 2021թ. առաջին կիսամյակի ավարտին կազմել է ընդամենը +107,805.5 հազ. դրամ

((63,573.7+254,294.80)-(42,012.6+168,050.4)): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կրեդիտորական պարտքի ավելացումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

3.1 Կապալառուների կողմից ներկայացրած յուրաքանչյուր կատարողական ակտի գումարից շարունակվել են պահվել 5%-ի չափով երաշխիքային գումարներ՝ մինչև հիմնանորոգման աշխատանքների վերջնական ավարտը:

3.2 Հաշվետու ժանամակաշրջանի ավարտին առկա են եղել կատարված աշխատանքների դիմաց չվճարած գումարներ, որոնց վճարումները իրականացվել են հաջորդող՝ 2021թ. հուլիս ամսվա ընթացքում:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում (Ծրագիր 10-ը ներառյալ) 2021թ. վեց ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների և տարբերությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2021թ. վեց ամիսներ						
		Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարբերություն (+, -)	Դեբիտորա-կան պարտքերի աճ, նվազում (+, -)	Կրեդիտո-րական պարտքերի աճ, նվազում (+, -)	Բացարձակ շեղում (+, -)	Սյունակ 8 – Սյունակ 5 (+, -)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Ծրագիր 1	1,076,295.9	1,127,178.0	+ 50,882.1	+ 29,622.8	+ 80,504.9	+ 50,882.1	*0,0*
2	Ծրագիր 2	3,308,127.1	3,516,399.4	+ 208,272.3	+ 2,214.7	+ 213,360.4	+ 201,145.7	*+ 2,873.4*

3	Ծրագիր 5	3,333,029.7	4,025,887.9	+ 692,858.2	-311,089.1	+ 381,769.0	+ 692,858.2	0,1
4	Ծրագիր 6	666,480.9	705,801.0	+ 39,320.1	+ 39,461.5	+ 78,781.6	+ 39,320.1	0,0
1	2	3	4	5	6	7	8	9
5	Ծրագիր 11	1,115,058.8	1,172,183.3	+ 57,124.5	+ 44,882.1	+ 102,245.6	+ 57,363.5	+ 239.0
6	Ծրագիր 12	863,170.2	899,011.9	+35,841.7	+ 33,146.2	+ 68,987.9	+ 35,841.7	0,0
Ընդամենը՝		**10,362,162.6**	**11,446,461.5**	**+ 1,084,298.9**	**- 161,761.9**	**+ 925,649.5**	**+ 1,087,411.3**	**+ 3,112.5**
7	Ծրագիր 3	4,196,619.8	4,186,929.0	-9,690.8	- 3,016.4	0,0	- 3,016.4	+ 12,707.2
8	Ծրագիր 4	701,740.1	575,137.0	-126,603.1	+ 126,603.2	0,0	-126,603.2	0,1
9	Ծրագիր 7	721,094.7	663,520.5	-57,574.2	+ 57,574.2	0,0	-57,574.2	0,0
10	Ծրագիր 8	873,205.9	796,897.5	-76,308.4	+ 76,308.4	0,0	-76,308.4	0,0
11	Ծրագիր 9	1,385,324.7	1,329,069.1	-56,255.6	+ 56,355.6	0,0	-56,355.6	+ 100,0

Ընդամենը՝	7,877,985.2	7,551,553.1	**- 326,432.1**	**+ 313,825.0**	**0.0**	**- 313,825.0**	***+ 12,607.1***

1	2	3	4	5	6	7	8	9
ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐ *(առանց Ծրագիր 10-ի**)*		**18,240,147.8**	**18,998,014.6**	**757,866.8**	**- 152,063.1**	**+ 925,649.5**	**+ 773,586.4**	***+ 15,719.6***

** Նախարարության Ծրագիր 10-ում 2021թ. առաջին կիսամյակի ավարտին փաստացի և դրամարկղային ծախսերի իրական տարբերությունը կազմել է 259,012.6 հազ. դրամ (1,407,078.6-1,363,538.4), ներառյալ՝ 7,728.2 հազ. դրամի ֆինանսավորման և դրամարկղային ծախսի ցուցանիշների միջև տարբերությունը:

Ծրագիր 10-ում ԾԻԳ-ի 2021թ. առաջին կիսամյակի փաստացի ծախսի և դրամարկղային ծախսի տարբերությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1) Համաձայն կապալառուների հետ կնքված պայմանագրերի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների կատարողական ակտերից համամասնորեն մարվել են 2019թ. փոխանցված կանխավճարային գումարները, ինչպես նաև կապալառուների կողմից ներկայացրած յուրաքանչյուր կատարողական ակտի գումարից պահվել է երաշխիքային գումար 5%-ի չափով մինչև հիմնանորոգման աշխատանքների վերջնական ավարտը՝ սեպտեմբեր 2021թ.:

2) 2021թ. առաջին կիսամյակի ավարտին առկա են կատարված աշխատանքների դիմաց չվճարած գումարներ, որոնց վճարումները իրականացվել են հաջորդ ամսվա ընթացքում:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. վեց ամիսների ամփոփ կատարողականը կազմել է 91,4%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 43,4%, ԾՐԱԳՐԵՐ-ի առաջին կիսամյակի պլանի մնացորդը հանրագումարով կազմել է 1,832,956.5 հազ. դրամ, իսկ տարեկան պլանի մնացորդը՝ 24,242,938.5 հազ. դրամ: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. վեց ամիսների կատարողականների, 2021թ. առաջին կիսամյակի և

տարեկան պլանի մնացորդների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև (տես՝ Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ- ի 2021թ. վեց ամիսների կատարողականների, 2021թ. առաջին կիսամյակի և տարեկան պլանի մնացորդների վերաբերյալ վերաբերյալ

(հազ. դրամ)

ԾՐԱԳՐԵՐ	Տարեկան պլան	Փոփոխություններ տարեկան պլանում		Տարեկան ճշտված պլան	Կատարողա-կաններ (%)		Պլանի մնացորդ	
		ՀՀ կառավա-ության կողմից	Վերադասի կողմից		*Կիսամ-յակային*	*Տարեկան*	***Կիսամ-յակային***	***Տարեկան***
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
Ծրագիր 1	2,430,557.6	-50,000.0	0.0	2,380,557.6	*92.4*	*45.2*	88,982.9	1,304,261.7
Ծրագիր 2	7,517,963.6	-587,461.3	0.0	6,930,502.3	*98.3*	*47.7*	58,465.8	3,622,375.2
Ծրագիր 3	9,453,600.8	-333,562.6	0.0	9,120,038.2	*100.0*	*46.0*	779.0	4,923,418.4
Ծրագիր 4	1,600,900.0	-300,000.0	0.0	1,300,900.0	*100.0*	*53.9*	0.0	599,159.9
Ծրագիր 5	8,085,156.6	0.0	120,000.0	8,205,156.6	*100.0*	*40.6*	0.0	4,872,126.9

	Դրամի 6	Դրամի 7	Դրամի 8	Դրամի 9	Դրամի 10	Դրամի 11	Դրամի 12
	1,810,483.2	1,439,533.1	1,784,733.0	2,770,649.5	2,501,664.5	2,625,077.0	2,061,078.0
	0.0	0.0	0.0	0.0	0.0	-5,645.0	-90,000.0
	0.0	0.0	0.0	0.0	28,000.0	-11,243.6	0.0
	1,810,483.2	1,439,533.1	1,784,733.0	2,770,649.5	2,529,664.5	2,608,188.4	1,971,078.0
	92.0	*100.0*	*97.9*	*100.0*	*45.7*	*95.8*	*91.0*
	36.8	*50.1*	*48.9*	*50.0*	*62.7*	*42.8*	*43.8*
	57,712.4	0.0	19,160.6	0.0	1,473,592.8	49,337.4	84,925.7
	1,144,002.3	718,438.4	911,527.1	1,385,324.8	2,161,266.3	1,493,129.7	1,107,907.8
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
Ընդամենը՝	**44,081,396.9**	**-1,366,668.9**	**136,756.4**	**42,851,484.4**	***91.0***	***43.4***	**1,832,956.5**	**24,242,938.5**

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից և հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ. վեց ամիսների ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների հաշվեքննության իրականացման համար դիտարկվել են նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականները: Հաշվեքննության ժամանակ կարևորվել է ՀՀ կառավարություն ներկայացրած բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալների ընդգրկելու խնդիրները:

Նախարարության 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն ու հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. տարեկան ընդհանուր պլանը կազմել է 44,081,396.9 հազ. դրամ, ճշտված տարեկան պլանը՝ 42,851,484.4 հազ. դրամ, տարբերությունը՝ 1,229,912.5 հազ. դրամը, հիմնավորված է ՀՀ կառավարության որոշումներով 1,336,668.9 հազ. դրամի նվազեցումներով (Ծրագիր 1-ում 50,000.0 հազ. դրամով, Ծրագիր 2-ում 587,461.3 հազ. դրամով, Ծրագիր 3-ում 333,562.6 հազ. դրամով, Ծրագիր 4-ում 300,000.0 հազ. դրամով, Ծրագիր 11-ում 5,645.0 հազ. դրամով և Ծրագիր 12-ում՝ 90,000.0 հազ. դրամով), ինչպես նաև վերադասի կողմից սահմանված կարգով 136,756.4 հազ. դրամի ընդհանուր վերաբաշխման միջոցով: Վերադասի կողմից Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. տարեկան պլանի վերաբաշխումները վերաբերում են Ծրագիր 5-ում 120,000.0 հազ. դրամի և Ծրագիր 10-ում 28,000.0 հազ. դրամի ավելացմանը, ինչպես նաև՝ Ծրագիր 11-ում 11,243.6 հազ. դրամի նվազեցմանը: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. վեց ամիսների պլանը կազմել է 20,900,522.8 հազ. դրամ, իսկ ճշտված տարեկան պլանը 20,441,502.5 հազ. դրամ, տարբերությունը՝ -459,020.3 հազ. դրամը, հիմնավորված են ըստ ԾՐԱԳՐԵՐ-ի վերը հիշատակված ՀՀ կառավարության որոշումներով և վերադասի կողմից սահմանված կարգով վերաբաշխումներով՝ համապատասխան կիսամյակային համամասնություններով: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. վեց ամիսների ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 18,808,545.7 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 19,395,942.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 20,405,093.2 հազ. դրամ: Նախարարության 2021թ. տարեկան և ԾՐԱԳՐԵՐ-ի վեց ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանշները տրված են Աղյուսակ 5-ում և Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 5

Նախարարության 2021 թվականի տարեկան ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, *(ծածկագիրը)*	2021թ. տարեկան պլան	Փոփոխություններ տարեկան պլանում (+, -)		2021թ. տարեկան ճշտված պլան	2021թ. վեց ամիսներ							Կատարման տոկոսը	
		<< կառավարության կողմից	Վերադասի կողմից		2021թ. առաջին կիսամյակի պլան	Փոփոխություններ առաջին կիսամյակի պլանում (+, -)		2021թ. առաջին կիսամյակի ճշտված պլան	Փաստացի ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարեկան ճշտված պլանի կիսամյակի գծով ֆինանսավորման տոկոսը	Տարեկան ճշտված պլանի կիսամյակի գծով ծախսերի տոկոսը
						<< կառավարության կողմից	Վերադասի կողմից						
Նախարարություն *(104010)*	**74,230,901.6**	-1,930,093.5	-1,037.0	**72,299,771.1**	**35,516,875.6**	269,947.9	-1,037.0	**35,785,786.5**	**31,756,491.4**	**31,312,064.4**	**32,657,098.2**	*43,3*	*87,5*

Աղյուսակ 6

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021 թ. վեց ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

ԾՐԱԳՐԵՐ	Ճշտված պլան	Ֆինանսավորում			Դրամարկղային ծախս			Փաստացի ծախս		
		Ընդամենը	Տեսակարար կշիռը ԾՐԱԳՐԵՐ -ի **«Ֆինանսավորման»** մեջ (%)	Տեսակարար կշիռը Նախարարության **«Ֆինանսավորման»** մեջ (%)	Ընդամենը	Տեսակարար կշիռը ԾՐԱԳՐԵՐ - ի **«Դրամարկղային ծախսեր»** ի մեջ (%)	Տեսակարար կշիռը Նախարարության **«Դրամարկղային ծախսեր»** ի մեջ (%)	Ընդամենը	Տեսակարար կշիռը ԾՐԱԳՐԵՐ -ի **«Փաստացի ծախսեր»** - ի մեջ (%)	Տեսակարար կշիռը Նախարարության **«Փաստացի ծախսեր»** - ի մեջ (%)
1	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*
Ծրագիր 1	**1,165,278.8**	**1,076,295.9**	**5.8**	**3.4**	**1,076,295.9**	***5.5***	***3.4***	**1,127,178.0**	***5.5***	***3.5***
Ծրագիր 2	**3,366,592.9**	**3,308,127.1**	***17.8***	***7.7***	**3,308,127.1**	***17.1***	***10.6***	**3,516,399.4**	***17.2***	***10.8***
Ծրագիր 3	**4,197,398.8**	**4,196,619.8**	***22.6***	***13.2***	**4,196,619.8**	***21.6***	***13.4***	**4,186,929.0**	***20.5***	***12.8***

Ծրագիր 12	Ծրագիր 11	Ծրագիր 10	Ծրագիր 9	Ծրագիր 8	Ծրագիր 7	Ծրագիր 6	Ծրագիր 5	Ծրագիր 4
948,095.9	1,164,396.1	1,841,991.0	1,385,324.7	892,366.5	721,094.7	724,193.3	3,333,029.7	701,740.1
863,170.2	1,115,058.8	368,398.2	1,385,324.7	873,205.9	721,094.7	666,480.9	3,333,029.7	701,740.1
4.6	6.0	2.0	7.4	4.7	3.9	3.6	17.9	3.8
2.7	3.5	1.2	4.4	2.7	2.3	2.1	10.5	2.2
863,170.2	1,115,058.8	1,155,794.2	1,385,324.7	873,205.9	721,094.7	666,480.9	3,333,029.7	701,740.1
4.5	5.7	6.0	7.1	4.5	3.7	3.4	17.2	3.6
2.8	3.6	3.7	4.4	2.8	2.3	2.1	10.6	2.2
899,011.9	1,172,183.3	1,407,078.6	1,329,069.1	796,897.5	663,520.5	705,801.0	4,025,887.9	575,137.0
4.4	5.7	6.9	6.5	3.9	3.3	3.5	19.7	2.8
2.8	3.6	4.3	4.1	2.4	2.0	2.2	12.3	1.8
14	13	12	11	10	9	8	7	6	5	1

ԸՆԴԱՄԵՆԸ՝	20,441,502.5	18,608,546.0	*100,0*	*58,6*	19,395,942.0	*100.0*	*61.9*	20,405,093.2	*100.0*	*62.5*

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 Ըստ Նախարարությունից ստացված տեղեկատվության Ծրագիր 1-ի թվով 55, իսկ Ծրագիր 2-ի գծով թվով 78 կազմակերպությունների 2021թ. առաջին կիսամյակի ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների գծով ՀՀ Ֆինանսների նախարարության շտեմարանների ընդամենագրերի, ինչպես նաև Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի 2021թ. հուլիսի 1-ի դրությամբ ըստ կազմակերպությունների և ըստ ընդամենագրերի փաստացի սովորողների թվաքանակների շարժի, առկա են տարբերություններ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Առարկություն *«2021թ. տարեկան և կիսամյակի կտրվածքով Ծրագիր 1-ում նախատեսված սովորողների թիվը ճշտվել և կազմել է 7760 սովորող՝ հաստատված 7923 սովորողի, Ծրագիր 2-ում նախատեսված ուսանողների թիվը ճշտվել և կազմել է 20955 ուսանող՝ հաստատված 22112 ուսանողի փոխարեն: Բացի այդ, կրթաթոշակ ստացող սովորողների թիվը (որն արտացոլված է 1045-12001 և 1045-12002 միջոցառումների մեջ) Ծրագիր 1-ում տարվա և կիսամյակի կտրվածքով ճշտվել և կազմել է 7027 ուսանող, Ծրագիր 2-ում՝ ճշտվել և կազմել է 12847 ուսանող: Փաստացի թվերը նույնպես կազմել են համապատասխանաբար 7027 և 12847 (տարբերությունը՝ 0): Հարկ ենք համարում նշել, որ 1045-12001 և 1045-12003 միջոցառումները տարբեր են, հետևաբար ոչ ֆինանսական ցուցանիշներն էլ տարբեր են:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում, քանի որ խնդրո առարկա 2021թ. առաջին կիսամյակի ուսանողական նպաստների և կրթաթոշակների գծով արդյունքին միտված, ոչ ֆինանսական ցուցանիշների տարբերություններն առաջացել են ոչ թե ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարանների և Նախարարության տրամադրած սինթետիկ մակարդակի ամփոփագրերի, այլ՝ ըստ ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. հոկտեմբերի 8-ի թիվ ՀՊԵ-ԴՉ-204 գրությամբ (այսուհետ՝ Գրություն 1) առաջարկված ձևաչափերի (Հավելվածներ՝ 1-2, 1-3, 2-2 և 2-3) և Նախարարությունից 2021թ. հոկտեմբերի 27-ի թիվ 01/17.2/ 24548-21 գրությամբ (այսուհետ՝ Գրություն 2) ներկայացված համապատասխան տեղեկատվությամբ ըստ ՊՈԱԿ-ների անալիտիկ մակարդակների ընդամենագրերի միջև:

6.2 Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի թվով 4-ական ՊՈԱԿ-ների կողմից, համաձայն պետության կողմից «Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման մասին» և «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման մասին» պայմանագրերի 3.3 ենթակետերի պահանջների, հաշվապահական փաստաթղթերը պարտավոր են վարել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Հաշվեքննությամբ պարզվեց, որ հաշվապահական ծրագրի (այսուհետ՝ ՀԾ) շրջանակներում հաշվապահական հաշվառումը ՊՈԱԿ-ներում անալիտիկ մակարդակում առանձնացված չի վարվում, պետական բյուջեից ֆինանսավորված և արտաբյուջետային միջոցներից (ուսման վարձեր և այլն) ներգրավված միջոցների ծախսերը մեկտեղված են, հնարավոր չէ գնահատել ինչպես փաստացի և դրամարկղային ծախսերի, այնպես էլ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի սինթետիկ մակարդակում հաշվարկների ճշգրտությունը, իրավասությունը և արժանահավատությունը: Միաժամանակ, ՊՈԱԿ-ների կողմից Նախարարությանը ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով (այսուհետ՝ Հրաման 1) սահմանված ձևաչափին, որի հետևանքով Նախարարության ներկայացրած տվյալները չեն արտացոլում փաստացի ծախսերի իրական պատկերը:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Առարկություն *«Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախարարության ենթակայության կազմակերպությունները իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններ են և հիմք ընդունելով «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածի 1 մասի և 9-րդ հոդվածի 1 մասի պահանջները՝ «Կազմակերպության ղեկավարը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար», և 9-րդ հոդվածի 1-ի մասի՝ «Կազմակերպությունում հաշվապահական*

հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը կամ կազմակերպության աշխատող համարվող հաշվապահը, իսկ հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ այդ կազմակերպության լիազորված անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ)՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան»: Միաժամանակ հայտնում ենք, որ Նախարարությունը 2020թ. իր ենթակայության կազմակերպությունների հաշվապահների համար իրականացրել է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահների վերապատրաստման դասընթաց», որի շրջանակներում վերապատրաստում են անցել նախարարության ենթակա կազմակերպությունների հաշվապահները: Ծրագիրն իր մեջ ներառում էր նաև «Հանրային հատվածում «ՀԾ» փաթեթի կիրառումը»:

Հարկ ենք համարում նշել նաև, որ բացի ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով սահմանված ձևաչափերի ՊՈԱԿ-ները նախարարություն են ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թ. փետրվարի 4-ի N 104-Ն հրամանով սահմանված ՊՈԱԿ-ների փաստացի ծախսերի և դրամական հոսքերի շարժի վերաբերյալ հաշվետվություններ, որոնք վերաբերում են Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման և ամփոփման պայմաններին, իսկ ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թ. փետրվարի 13-ի N 104-Ն հրամանը վերաբերում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսագիտական գործունեությանը:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը պարզաբանման և բացատրության փոխարեն ներկայացրել է առարկություն, որը չի ընդունվում:

6.3 Նախարարության «Վանաձորի Կ. Ղարաքեշիշյանի անվան թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության առաջին կիսամյակի նախահաշվով աշխատանքի վարձատրության համար նախատեսված է եղել 31,494.5 հազ. դրամ, սակայն հաշվարկվել է 42,543.8 հազ. դրամ: ՊՈԱԿ-ը ՀԾ-ով հաշվապահական հաշվառումը չի վարել ամբողջական, մասնավորապես, (2291) «Դեբիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով» հաշվից դեբետով ձևակերպել է աշխատավարձի գծով կանխավճար, որը հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ չի փոխհատուցել ծախսերով՝ առաջացնելով աշխատավարձի վճարման գծով 114,056.6 հազ. դրամի դեբիտորական պարտք:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Առարկություն. *«Ըստ «Վանաձորի Կ. Ղարաքեշիշյանի անվան թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի պարզաբանման՝ 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության առաջին կիսամյակի նախահաշվով աշխատանքի վարձատրության համար նախատեսված է եղել 31,494.5 հազ. դրամ, սակայն հունիս ամսին հաշվարկվել է նաև*

մանկավարժների արձակուրդային վճարները, որի պատճառով գումարը կազմել է 42,543.8 հազար դրամ: Իսկ ՀԾ ծրագրում առաջացած 114052,6 հազար դրամ դեբիտորական պարտքի առաջացման պատճառն այն է եղել, որ աշխատավարձի փոխանցումները ձևակերպել է վճարման հանձնարարագրով և չի ձևակերպել «վճարումներ հաշվարկային հաշվից» բաժնով: Այդ բաժնում են մնացել առձեռն վճարվող գումարները՝ առաջացնելով պարտք: Հաշվեքննիչ պալատի անդամի հետ հեռախոսային զրույցից հետո կատարել է ծրագրային ուղղում:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը պարզաբանման և բացատրության փոխարեն ներկայացրել է առարկություն, որը չի ընդունվում:

6.4 Նախարարության Ծրագիր 2-ի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճերի բացարձակ հաշվարկը 2,873.4 հազ. դրամով չի համընկնում դրամարկղային և փաստացի ծախսերի միջև առաջացած տարբերության հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Արձագանքը բացակայում է:»

6.5 Նախարարության Ծրագիր 2-ում ընդգրկված «Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից կնքված թիվ 003/1 պայմանագրի (650.0 հազ. դրամ գումարով) 3.2 ենթակետի համաձայն վճարում պետք է կատարվեր կատարողական ակտին համապատասխան: Սակայն նշված դեպքում վճարումը կատարվել է առանց կատարողական ակտի, իսկ «Client-Treasury» համակարգում այն ճանաչվել է որպես ծախս: Թիվ 003/2 պայմանագրում՝ (485.0 հազ. դրամ գումարով) նշված գումարը նույնպես փոխանցվել է առանց կատարողական ակտի, ընդ որում պայմանագրով սահմանված փաստացի աշխատանքները կատարված չեն, սակայն «Client-Treasury» համակարգում ճանաչվել են որպես ծախս:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Առարկություն. *«Ըստ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված պարզաբանման, ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի և «Մեդ-Պրակտիկ» ՍՊԸ-ի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերը՝ / № 003/1, հավելված 1/1 առ 21.01.2021թ. և №003/2, հավելված 1/1 30.06.2021թ./ աշխատանքների կատարման ընթացքում առաջացած խնդիրների ու անհամաձայնությունների պատճառով կողմերի փոխադարձ համաձայնությամբ չեղարկվել են: Պայմանագրերի շրջանակներում քոլեջի արտաբյուջետային միջոցներից կատարվել են պայմանագրով նախատեսված կանխավճարային փոխանցումներ՝ 29.01.2021թ.-ին-650000 դրամ և 30.06.2021թ.-ին - 485000 դրամ:*

Պայմանագրերի խզման արդյունքում կնքվել է համաձայնագիր, որի համաձայն «Մեդ-Պրակտիկ» ՍՊԸ-ն պայմանագրերի հիման վրա ստացված կանխավճարային փոխանցումները՝ առանց պահումների և ամբողջությամբ, պարտավորվում է վերադարձնել մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը հետևյալ ժամանակացույցով՝

1. № 003/1, հավելված 1/1 (21.01.2021 թ.), վերջնաժամկետ՝ 01.11.2021 թ.

2. №003/2, հավելված 1/1 (30.06.2021թ.), վերջնաժամկետ՝ 20.12.2021 թ.:

Գումարների հետ փոխանցման մասին կներկայացնենք լրացուցիչ հաշվետվություն:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտն, ըստ էության, առարկություն չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

6.6 Նախարարությունը հաշվեքննությանը չի ներկայացրել Ծրագիր 2-ում ընդգրկված «Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը 2021թ. առաջին կիսամյակի շրջանառության տեղեկագիրը և գործառնությունների մատյանը, «Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2021թ. առաջին կիսամյակի շրջանառության տեղեկագիրը (համաձայն ներկայացված տեղեկանքի ՀԾ-ում առկա են թերի տեղեկատվություն և անճշտություններ), «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շրջանառության տեղեկագիրն ու հուշարար մատյանը (մնացած տեղեկատվության մասով առկա են թերի, ոչ լիարժեք տվյալներ), Ծրագիր 6-ում ընդգրկված «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» ՓԲԸ-ի պետական բյուջեից ֆինանսավորված 112,351.4 հազ. դրամի հաշվեքննության համար պահանջվող տեղեկատվությունը (համաձայն Նախարարության և ՓԲԸ-ի միջև կնքված սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրի), Ծրագիր 11-ում ընդգրկված «Երևանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի գործառույթների մատյանը:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Բացատրություններ. *«Ըստ կազմակերպության բանավոր մեկնաբանման՝ ներկայացվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատին: Ըստ ՊՈԱԿ-ի պարզաբանման՝ տեխնիկական խնդիրների հետ կապված, ՊՈԱԿ-ի ՀԾ բազայում տեղեկատվությունը թերի է եղել, գործարքներն ամբողջական չեն արտացոլվել, առկա են անճշտություններ, ինչի հետևանքով շրջանառության տեղեկագիրը չեն կարողացել դուրս բերել: Անճշտությունները վերացնելուց հետո կներկայացնեն անհրաժեշտ տեղեկատվությունը: Ըստ ստացված պարզաբանման՝ «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից 09.09.2021թ. է ներկայացվել պահանջվող տեղեկատվությունը, ներառյալ շրջանառության տեղեկագիրը: Քոլեջի հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերը կազմված են ճշգրիտ և ամբողջական, սակայն ՀԾ-ում առկա են որոշ անճշտություններ, կապված ծրագրային թերությունների հետ: Աշխատանքի ընթացքում ծրագրի սպասարկող անձնակազմի հետ կատարում են ներմուծված տվյալների ճշտումներ:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտն, ըստ էության, առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

6.7 Նախարարության Ծրագիր 2-ում ընդգրկված «Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում ծրագրի շրջանակներում «Օջախ Սթոն» ՓԲԸ-

ին փոխանցվել է 96.0 հազ. դրամ գումար բետոնյա ծաղկամանների գնման համար, ինչը նախատեսված չէ գնումների պլանով: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 4-րդ գլխի 16-րդ և 17-րդ կետերի պահանջների հետ: Միաժամանակ, առկա է նշված գործարքի անհամապատասխանություն Նախարարության և ՊՈԱԿ-ի միջև կնքված ուսանողական նպաստի տրամադրման պայմանագրի առարկայի էության հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Բացատրություն. *«Ըստ «Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից միջին մասնագիտական կրթության գծով «Ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում «Օջախ Սթոուն» ՓԲԸ-ին փոխանցված 96.0 հազար դրամ գումարով ձեռք բերված բետոնյա ծաղկամանների գնման վերաբերյալ ներկայացված պարզաբանման՝ ծաղկամանների ձեռքբերումն անհրաժեշտություն է եղել, քանի որ քոլեջն անմիջապես գտնվում է գլխավոր ճանապարհի եզրին, և շատ հաճախ ավտոմեքենաները կայանել են անմիջապես քոլեջի մուտքի մոտ, ինչն էլ վտանգ է առաջացրել ուսանողների համար: Որպես խնդրի լուծում, նպատակահարմար է գտնվել ցանկապատի փոխարեն քոլեջի մուտքը փողոցից առանձնացնել վերոնշյալ բետոնե ծաղկամաններով, որպեսզի և քոլեջի արտաքին տեսքը փոփոխության չենթարկվի, և միաժամանակ ապահովվի գեղագիտական տեսքը: Իսկ գնումների պլանով չնախատեսելու փաստը բացատրվում է նրանով, որ առկա է եղել տեխնիկական խնդիր, որի արդյունքում կետը բաց է թողնվել և վրիպել է ՊՈԱԿ-ի ուշադրությունից:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի բացատրությունները չեն ընդունվում:

6.8 Նախարարության Ծրագիր 2-ում ընդգրկված «Վանաձորի Թավրիզյանի անվան պետական արվեստի քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ըստ ՀՀ ֆինանսների նախարարության "Client-Treasury" համակարգով ներկայացված ծախսերը չեն համապատասխանում շրջանառության տեղեկագրին:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Բացատրություն. *«Ըստ ՊՈԱԿ-ի պարզաբանման՝ շրջանառության տեղեկագրում «client-TREASURY» ծրագրի 4823 և 4861 հաշիվները չեն համապատասխանել ՀԾ համակարգին, քանի որ այնտեղ բացակայել են դրանք: Համագործակցելով ՀԾ համակարգի սպասարկման բաժնի հետ, հաշիվները մուտքագրվել են, և կատարվել են համապատասխան ճշգրտումները:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի բացատրությունները չեն ընդունվում:

6.9 2021թ. վեց ամիսների Ծրագիր 3-ում փաստացի ծախսերի 9,690.8 հազ. դրամով դրամարկղային ծախսերին գերազանցումը չի համընկնում ընթացիկ գործունեության արդյունքում տարվա սկզբի համեմատ հաշվետու ժամանակաշրջանի

դեբիտորական պարտքերի աճի և կրեդիտորական պարտքերի նվազեցման բացարձակ հաշվարկին (3,016.4 հազ. դրամ) և առաջացել է 12,707.2 հազ. դրամի անհամապատասխանություն:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Առարկություն. *«12,707.2 շեղումը պայմանավորված է «Վ. Բրյուսովի անվան համալսարանի» հիմնադրամի 2020թ. տարեվերջի դեբիտորական պարտքը վրիպակի պատճառով արձանագրվել է 9-րդ ամսվա ցուցանիշը: 2021 թ. տարեսկզբին կատարվել է ճշգրտում:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

6.10 2021թ. վեց ամիսների Ծրագիր 4-ի հաշվետու ժամանակաշրջանի համար նախատեսված թվով 3370 (800,450.1 հազ. դրամ) սուբսիդավորվող ընտանիքներից, վարկառուներից 2021թ. վեց ամիսների համար ճշտված պլանով կազմել է՝ 3270 (701,740.1 հազ. դրամ), իսկ փաստացին կազմել է 2383 սուբսիդավորվող ընտանիքներ, վարկառուներ (701,740.1 հազ. դրամ), տարբերությունը՝ թվով 887-ով պակաս սուբսիդավորվող ընտանիքներ, վարկառուներ, սակայն ֆինանսավորված գումարները մնացել են նույնը: «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում շրջանակներում ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 29-ի թիվ 98-Ն որոշման մեջ ձեռք բերվող բնակարանի արժեքի առավելագույն չափ է ընդունվել 25,000.0 հազ. դրամը, մինչդեռ Հուշագրով ամրագրված է 26,000.0 հազ. դրամ: Նախարարության և «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպութան կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացված 2021թ. առաջին կիսամյակի թիվ 4 հավելվածում արտացոլված գումարների սինթետիկ մակարդակը չի համապատասխանում բյուջեյի կատարողականի հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«Ինն ամսվա ընթացքում կներկայացվեն ճշգրտված տվյալներ սուբսիդավորվող ընտանիքների, վարկառուների թվաքանակի վերաբերյալ: Հավելված 4-ում արտացոլված գումարները վերաբերվում են 2-րդ եռամսյակի ֆինանսական տվյալներին, և ներկայացված են ոչ աճողական կարգով:

Առարկություն. *«ՀՀ կառավարության 2010թ.-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատվել է «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ համաձայն հավելվածի: Նշված հավելվածի 4-րդ գլխի 4-րդ պարբերության 1-ին ու 2-րդ կետերի համաձայն.*

1) «երկրորդային շուկայից (ոչ անմիջապես կառուցապատողից) բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման համար հիփոթեքային վարկը տրամադրվելու է առնվազն 10 տարի մարման ժամկետով, առավելագույնը 9.5 տոկոսով, որից 2 տոկոսը կսուբսիդավորի պետությունը (այսինքն՝ վարկառուի համար վարկի տոկոսը կկազմի առավելագույնը 7,5 տոկոս), Հայաստանի Հանրապետության մարզերում տրամադրված հիփոթեքային վարկերի համար պետությունը կսուբսիդավորի 4 տոկոսը (այսինքն՝ Հայաստանի Հանրապետության մարզերում վարկառուի համար վարկի տոկոսը կկազմի առավելագույնը 5.5 տոկոս), իսկ առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման համար հիփոթեքային վարկը տրամադրվելու է առնվազն 10 տարի մարման ժամկետով, առավելագույնը 7.5 տոկոսով, որը չի սուբսիդավորվում»

2) «երկրորդային շուկայից (ոչ անմիջապես կառուցապատողից) ձեռք բերվող բնակարանի գինը Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում չի կարող գերազանցել 25 մլն դրամը, իսկ առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) ձեռք բերվող բնակարանի գինը՝ 30 մլն դրամը:»

Նախարարության և Ընկերության միջև 2021թ.-ի հունվարի 12-ին ստորագրվել է թիվ 01 Փոխըմբռնման հուշագիրը, որով Նախարարությունը լիազորել է Ընկերությանը Ծրագրի շրջանակներում Նախարարության անունից կազմակերպել և իրականացնել սուբսիդավորման գործընթացը և կատարել սուբսիդավորման գործընթացի համար անհրաժեշտ և տոկոսների սուբսիդավորման կարգով սահմանված բոլոր գործողությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծրագրի շրջանակներում սուբսիդավորման գործընթացը նախատեսված է միայն երկրորդային շուկայից (ոչ անմիջապես կառուցապատողից) բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դեպքում, իսկ առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դեպքում՝ այն նախատեսված չէ, ուստի առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դրույթները չեն արտացոլվել Հուշագրում:

Բացի այդ նշենք, որ Հուշագրով ամրագրված 26 միլիոն ՀՀ դրամը, դա ՀՀ տարածքում երկրորդային շուկայից (ոչ անմիջապես կառուցապատողից) գնելու դեպքում բնակելի անշարժ գույքի (բնակարան, անհատական բնակելի տուն) գնահատված արժեքի առավելագույն սահմանափակումն է:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում:

6.11 Նախարարության Ծրագիր 5-ի գծով ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված տեղեկատվության մեջ 2021թ. վեց ամիսների հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված թվով 108 ավագ դպրոցների տարեկան ֆինանսական հաշվարկները Նախարարության կողմից չեն տրամադրվել հաշվեքննությանը:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Առարկություն. *«Հաշվարկման կարգը ս.թ. հոկտեմբերի 21-ին էլեկտրոնային տարբերակով ներկայացվել է vazghov@mail.ru էլեկտրոնային փոստին:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում, հիշատակվածը վերաբերվում է Նախարարության 2021թ. ինն ամիսների ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության շրջանակներում հաշվեքննողի հարցման պատասխանին:

6.12 Նախարարության Ծրագիր 6-ի գծով ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված տեղեկատվության մեջ 2021թ. վեց ամիսների հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված թվով 10 մասնագիտացված դպրոցների տարեկան ֆինանսական հաշվարկները և 2021թ. հունվար ամսվա աշակերտների կոմպլեկտավորումները չեն ներկայացվել:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Բացատրություն. *«Նախարարությունն ակնկալում է, որ Հաշվեքննիչ պալատը կներկայացնի ծրագրի մասով մշակված ձևաչափ:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Տարեկան ֆինանսական հաշվարկների, վերաբաշխումների, դասարանների կազմավորման և աշակերտների կոմպլեկտավորումների ձևաչափերը ՀՀ հաշվեքննիչ պալատը չի մշակում, դրանք սահմանված են ՀՀ կառավարության որոշումներով և հանրակրթության ոլորտի իրավակարգավորումներով, իսկ տրամադրման առումով առաջարկվում է դիտարկել Ծրագիր 5-ի տարբերակը:

6.13 Նախարարության ենթակայության Ծրագիր 7-ում «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը հաշվապահական հաշվառումը ՀԾ համակարգով անալիտիկ մակարդակում վարում է ոչ լիարժեք, արդյունքում՝ ինչպես փաստացի և դրամարկղային ծախսերի, այնպես էլ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի սինթետիկ մակարդակում հնարավոր չէ գնահատել հաշվարկների ճշգրտությունը, իրավասությունը և արժանահավատությունը:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«Ձևակերպումը ընդհանուր է տրված, մինչդեռ կարելի էր մանրամասնել, և ցույց տալ, թե կոնկրետ, որ մակարդակում, որն է սխալ ձևակերպված:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Արձանագրվածը վերաբերվում է ՀԾ համակարգի հնարավորություններից ելնելով ՊՈԱԿ-ի հաշվապահական հաշվառման անալիտիկ մակարդակում արտաբյուջեի և պետական բյուջեի ֆինանսական միջոցների ձևավորման և ծախսման առանձնացված վարմանը և հաշվետվությունների ներկայացմանը:

6.14 Նախարարության ենթակայության Ծրագիր 11-ում ընդգրկված թվով 35 մարզադպրոցներ հաշվապահական հաշվառումը ՀԾ-ի համակարգով չեն վարում, ներկայացված տվյալները թերի և ոչ լիարժեք են: Առկա են անհամապատասխանություններ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. հուլիսի 23-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 463-Ն հրամանի հավելվածով սահմանված ժամկետների ու պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Բացատրություն. *«Մարզադպրոցներին համակարգիչներով և ՀԾ-ի համակարգով ապահովելու հարցը մշտապես եղել է նախարարության ուշադրության կենտրոնում, և դեռևս 2019 թ. նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել որոշման նախագիծ, որը նախատեսում էր մարզադպրոցներին գումարներ տրամադրել ՀԾ-ի համակարգ և համակարգիչներ ձեռքբերելու համար: 2019 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ կառավարությանն է ներկայացվել համապատասխան որոշման նախագիծ, սակայն չի ներառվել կառավարության նիստի օրակարգ: Ներկայումս նախարարությունը մշակում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ մարզադպրոցների համակարգիչների և ՀԾ-ի համակարգը ամբողջովին լուծելու համար:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի բացատրությունը հակասում է արձանագրված անհամապատասխանության և իրավակարգավորումների ժամանակացույցերով սահմանված ժամկետների հետ:

6.15 Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարանների տեղեկատվության Ծրագիր 11-ի 2021թ. առաջին կիսամյակի պլանի (2,625,077.0 հազ. դրամ) և ճշտված պլանի (2,608,188.4 հազ. դրամ) տարբերությունը կազմել է -16,888.6 հազ. դրամ: Նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ծրագիր 11-ի 2021թ. առաջին կիսամյակի թվով 35 մարզադպրոցների պլանների հանրագումարի (2,557,924.0 հազ. դրամ) և ճշտված պլանների հանրագումարների (2,587,400.9 հազ. դրամ) տարբերությունը կազմում է՝ + 9,476.9 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ընդունվել է ի գիտություն:»

6.16 Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարանի տեղեկատվության՝ Ծրագիր 11-ի 2021թ. առաջին կիսամյակի ոչ ֆինանսական, արդյունքին միտված նախատեսված ցուցանիշը կազմում է 17200 սան (11700 տղաներ և 5500 աղջիկներ): Նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ծրագիր 11-ի 2021թ. առաջին կիսամյակի ոչ ֆինանսական, արդյունքին միտված նախատեսված ցուցանիշն արձանագրվել է 10454 սան (8468 տղաներ և 1986 աղջիկներ), տարբերությունը՝ 6836

սաներ: Համապատասխանաբար, փաստացի ցուցանիշը ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարանում կազմել է 17290 (11761 տղաներ և 5529 աղջիկներ), սակայն ըստ Նախարարության տրամադրված տեղեկատվության՝ այն կազմում է 18240 սաներ (12048 տղաներ և 6192 աղջիկներ), տարբերությունը՝ 950 սան:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ինն ամսվա կտրվածքով կներկայացվեն ճշգրտված ցուցանիշներ:»

7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

7.1 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. վեց ամիսների հաշվեքննությամբ պարզվել է, որ.

7.1.1 Նախարարության Ծրագիր 1-ի 2021թ. վեց ամիսների ճշտված պլանի և փաստացի ֆինանսավորման (դրամարկղային ծախս) միջև պայմանավորված Նախարարության կիսամյա ֆինանսական միջոցների ավել նախատեսմամբ, առաջացել է 88,982.9 հազ. դրամի, իսկ Ծրագիր 2-ի մասով՝ 58,465.8 հազ. դրամի տարբերություն:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ընդունվել է ի գիտություն:»

7.1.2 Նախարարության Ծրագիր 1-ի 2021թ. վեց ամիսների ճշտված պլանն ըստ Նախարարության տրամադրված Հավելված 13-1-ի և Ծրագիր 1-ի համար ֆինանսական հաշվետվության, կազմում է 1,165,278.8 հազ. դրամ, սակայն ըստ Հավելված 1-1-ի (Ծրագիր 1-ում ընդգրկված ՊՈԱԿ-ների ճշտված պլաններ) այն հավասարվել է ֆինանսավորմանը և կազմում է 1,076,295.9 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ընդունվել է ի գիտություն:»

7.1.3 Նախարարության ենթակայության Ծրագիր 3-ի թվով 3 («Երևանի պետական համալսարան» հիմնադրամ, «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ) բարձրագույն մասնագիտական կրթության հաստատություններից ստացվել են ինչպես պետության կողմից լրիվ և մասնակի փոխհատուցմամբ ուսանողների քանակագումարային ամփոփ տեղեկատվության անվանացանկերում հիմնականում բացակայում են նպաստառու ուսանողների նույնականացման տվյալները:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. *«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությունն արդեն միջոցներ է ձեռնարկում պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների վերաբերյալ բուհերից ստացված տեղեկատվության մեջ ներառելու ուսանողների նույնականացման տվյալները:»*

7.1.4 Նախարարության Ծրագիր 3-ի «Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021թ. վեց ամիսների ընթացքում պետության կողմից ուսանողական նպաստի ձևով փոխհատուցումներում «Պատիվ ունեմ» ծրագրով ամփոփ աղյուսակում զրոյական տվյալների պայմաններում անվանացանկերում առկա են երկու նպաստառու ուսանողների մասին տեղեկատվություն 750.6 հազ. դրամ փոխհատուցմամբ: «2016թ. ապրիլի 2-6-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ զինված ուժերում մարտական հերթապահություն իրականացրած կամ մարտական գործողություններին մասնակցած ուսանողներ» սյունակում ամփոփ աղյուսակում զրոյական տվյալների պայմաններում անվանացանկերում առկա են թվով 16 նպաստառու ուսանողների մասին տեղեկատվություն 904.6 հազ. դրամ փոխհատուցմամբ: Արդյունքում, առկա է 2021թ. առաջին կիսամյակում նպաստառու ուսանողների թվով 18 ուսանողների գծով 376.6 հազ. դրամի տարբերություն:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Առարկություն. *«**X 60** «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված պատերազմի մասնակից ուսանողներին և մարտական գործողության մասնակցի զավակ, ամուսին, կին հանդիսացող ուսանողներին» մեկ կիսամյակի ուսման վարձի փոխհատուցում տրամադրվել է 2021 թվականի հունվարից /գործընթացը շարունակական է/ ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2008-Լ որոշման համաձայն /3 բուհերին հատկացված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը կցվում է/:*

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի X 52 «Պատիվ ունեմ» ծրագրով սովորում են 2 ուսանող, որոնց ուսման վճարի փոխհատուցումը տրամադրվում է բուհին ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում /պայմանագիրը կնքվում է հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին/:

Մեր կարծիքով, տարբերությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ փաստացի սովորողների համար հիմնականում փոխանցումներն իրականացվում են ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում, անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ քննարկումների, որոնց արդյունքներին անդրադարձ կկատարվի 2021թ. ինն ամիսների հաշվեքննության ժամանակ:

7.1.5 Նախարարության Ծրագիր 3-ի «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2021թ. վեց ամիսների ընթացքում պետության կողմից ուսանողական նպաստի ձևով փոխհատուցումներում բացառությամբ «Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց» և «Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս առաջին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին» տեսակների, մյուս բոլոր ուղղություններով արձանագրվել են տարբերություններ թվով 41 նպաստառու ուսանողների քանակով, 90,873.0 հազ. դրամի չափով, ընդ որում «Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս առաջին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին» ուղղությամբ անվանացանկերում բացակայում են թվով մեկ նպաստառուի տվյալները: Հիմնադրամի պետության կողմից ուսանողական վարձերի մասնակի փոխհատուցմամբ թվով 9 ուղղություններում արձանագրվել են տարբերություններ թվով 238 նպաստառու ուսանողների մասով՝ 37,822.8 հազ. դրամի չափով: Արդյունքում, հիմնադրամի 2021թ. առաջին կիսամյակում առկա է թվով 279 նպաստառուի մասով՝ 128,695.8 հազ. դրամի տարբերություն:

Առարկություն. *«Տես՝ 7.1.4 ենթակետի առարկությունը:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում, անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ քննարկումների, որոնց արդյունքներին անդրադարձ կկատարվի 2021թ. ինն ամիսների հաշվեքննության ժամանակ:

7.1.6 Նախարարության Ծրագիր 5-ում 2021թ. առաջին կիսամյակում սովորողների ընդհանուր թվի 1323 աշակերտներով պակաս արձանագրման (տղաների 346-ով, 2,3% և աղջիկների 977-ով, 6,0%), 100% ֆինանսավորման, դրամարկղային ծախսի և ֆինանսավորման տարբերության բացակայության պայմաններում, փաստացի ծախսը դրամարկղային ծախսին գերազանցել է 692,858.2 հազ. դրամով:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Առարկություն. *«Ֆինանսավորման համար հիմք է հանդիսացել սովորողների փաստացի թիվը, և պայմանագրերը կնքվել են՝ 1323 աշակերտներով պակաս թվաքանակը հաշվի առնելով ՀՀ կառավարության 30.08.2018 թ. թիվ 954-Ն որոշմամբ սահմանվում է դասարանների կազմավորման կարգ, ըստ որի ավագ դպրոցներում յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը 30 է, սակայն նվազագույն շեմ սահմանված չէ, հետևաբար դասարանների թիվը չի պակասել: Այդ իսկ պատճառով փաստացի ծախսը չի կարող նվազել:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում:

7.1.7 Նախարարության Ծրագիր 6-ում 2021թ. առաջին կիսամյակում սովորողների ընդհանուր թվի 117 աշակերտներով պակաս արձանագրման (տղաների 76-ով, 5,9% և աղջիկների 41-ով, 5,9%), 57,712.4 հազ. դրամի թերֆինանսավորման, դրամարկղային ծախսի և ֆինանսավորման տարբերության բացակայության պայմաններում, փաստացի ծախսը դրամարկղային ծախսին գերազանցել է 39,320.1 հազ. դրամով:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Առարկություն. *«Ֆինանսավորման համար հիմք է հանդիսացել սովորողների փաստացի թիվը, և պայմանագրերը կնքվել են՝ 117 աշակերտներով պակաս թվաքանակը հաշվի առնելով: ՀՀ կառավարության 30.08.2018 թ. թիվ 954-Ն որոշմամբ սահմանվում է դասարանների կազմավորման կարգ, ըստ որի ավագ դպրոցներում յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը 30 է, սակայն նվազագույն շեմ սահմանված չէ, հետևաբար դասարանների թիվը չի պակասել: Այդ իսկ պատճառով փաստացի ծախսը չի կարող նվազել:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում:

7.1.8 Նախարարության Ծրագիր 7-ի շրջանակներում 2021թ. վեց ամիսների թվով 3 պակաս ներկայացումների (նախատեսված թվով 1 նոր ներկայացումը ևս չի բեմականացվել), հանդիսատեսների քանակի 20086-ով պակաս հաճախելիության պայմաններում դրամարկղային ծախսը (ֆինանսավորման) փաստացի ծախսերին գերազանցել է 57,574.2 հազ. դրամով:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Բացատրություն. *«ՊՈԱԿ-ին տրվող գումարներն իր մեջ ներառում է աշխատողների աշխատավարձի և ՊՈԱԿ-ի պահպանման ծախսերը, հետևաբար հանդիսատեսների քանակի 20086-ով պակաս հաճախելիությունը չի կարող անդրադառնալ աշխատողների աշխատավարձի և պահպանման ծախսերի վրա: Կրեդիտորական պարտքեր (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածում չեն հաշվառվել, քանի որ կրեդիտորական պարտքեր չեն առաջացել:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի բացատրությունը պահանջում է լրացուցիչ քննարկումներ, որին անդրադարձ կկատարվի 2021թ. ինն ամիսների հաշվեքննության ժամանակ:

7.1.9 Նախարարության Ծրագիր 7-ի 2021թ. երեք ամիսների հաշվեքննությամբ արձանագրված աբոնոմենտով թվով 134 հանդիսատեսի պայմաններում 2021թ. վեց ամիսների հաշվեքննության ժամանակ ներկայացված է փաստացի զրոյական ցուցանիշ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Բացատրություն. *«ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված՝ «Հանդիսատեսների թվաքանակների նվազումը, նոր ներկայացումների և բեմադրությունների ստեղծագործական կազմում ընդգրկված ստեղծագործողների թվի զրոյական ցուցանիշները» լրացուցիչ մեկնաբանման կարիք ունի:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտի բացատրությունը պահանջում է լրացուցիչ քննարկումներ, որին անդրադարձ կկատարվի 2021թ. ինն ամիսների հաշվեքննության ժամանակ:

7.1.10 Նախարարության Ծրագիր 8-ի 2021թ. վեց ամիսների ճշտված պլանի և դրամարկղային ծախսի միջև 19,160.6 հազ. դրամի տարբերության հանգամանքում (Խորեոգրաֆիայի թատրոն» ՊՈԱԿ-ի հետ դրամաշնորհի պայմանագիր չի կնքել՝ դատական ընթացակարգերի պատճառով՝ 8,731.1 հազ. դրամ) կազմակերպությունների կողմից ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումների ոչ ամբողջությամբ օգտագործման հետևանքով առաջացել է 10,429.5 հազ. դրամի տարբերություն:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. *«Ընդունվել է ի գիտություն:»*

7.1.11 Նախարարության Ծրագիր 8-ում դահլիճի միջին բեռնվածության ցուցանիշները տարբերվում են ՀՀ ֆինսների նախարարության համապատասխան շտեմարանում ներկայացված տվյալներից, որտեղ նշված են դահլիճի միջին բեռնվածության 66.2% ճշտված տվյալը և փաստացի 57.8 ցուցանիշը:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. *«Ընդունվել է ի գիտություն:»*

7.1.12 Ծրագիր 8-ի 2021թ. վեց ամիսների թատրոնների հրավիրատոմսերի տրամադրման (վաճառված տոմսերի նկատմամբ 0 տոկոսից մինչև 39%-ը), տոմսերի արժեքների սահմանման (միջինը՝ 500 դրամից մինչև 2938 դրամը) և աբոնեմենտների բաշխման (վաճառված տոմսերի նկատմամբ 0 տոկոսից մինչև 89%-ը) հարցում առկա չէ Նախարարության քաղաքականությունն ու դիրքորոշումը: Մասնավորապես՝ «Երևանի կամերային պետական թատրոն» և «Երևանի Հովի. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ-ների մեկ տոմսի միջին կիսամյակային արժեքը սահմանվել է համեմատաբար բարձր և այցելելուների համար աբոնեմենտներ չեն տրամադրվել:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«Թատրոնների հրավիրատոմսերի և վաճառված տոմսերի մասով հայտնում ենք, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը որևէ միջնորդություն և հատուկ դիրքորոշում չունի: ՊՈԱԿ-ները ինքնուրույն են կառավարում իրենց տոմսային տնտեսությունը: «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ը հաշվառված չէ աբոնեմենտային ծրագրի շրջանակներում, քանի որ ներկայացումները միայն 18 տարեկանից բարձր տարիք ունեցող անձանց համար են: «Երևանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ-ի աբոնեմենտային ցուցանիշում տեղի է ունեցել տեխնիկական վրիպում, որի ճշգրտված ցուցանիշը կներկայացվի 9 ամիսների տվյալները ներկայացնելիս:»

7.1.13 Նախարարության Ծրագիր 9-ում ընդգրկված «Կոմիտասի անվան ազգային քառյակ» ՊՈԱԿ-ը 2021թ. առաջին կիսամյակում նախատեսված թվով 12 ներկայացումից փաստացի իրականացրել է 9-ը: Նոր ներկայացում նախատեսել էր մեկը, սակայն չի բեմականացրել, իսկ բեմականացված ներկայացումների ժամանակ դահլիճի միջին բեռնվածությունը պլանավորված 60%-ի դիմաց կազմել է 105.2%, պլանավորված 2160 հանդիսատեսի դիմաց ներկայացումներին փաստացի ներկա է եղել թվով 2840 հանդիսատես, իսկ մեկ տոմսի միջին կիսամյակային գինը կազմել է 923 դրամ: Ներկայացված զրոյական վաճառված տոմսերի և հրավիրատոմսերի վերաբերյալ, ըստ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած տեղեկատվության, սեփական դահլիճ չունենալու պատճառով տոմսերի վաճառք չի կատարվում, համերգներն իրականացվում են պատվիրատուի պատվերով, որի համար վերջինիս կողմից տրվում է միջոցառման մասնակցության գումար, իսկ հանդիսատեսի քանակը ձևավորվում է պատվիրատուի կողմից տրված հանդիսատեսի քանակի վերաբերյալ տեղեկանքների հիման վրա: Դահլիճի պլանային և փաստացի միջին բեռնվածության ցուցանիշների և դրանց հաշվարկման մեթոդաբանությունը բացակայում է:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Բացատրություն. *«... քառյակը ստեղծագործական խումբ է, որի եկամուտը գոյանում է ծառայությունների մատուցման դիմաց տրվող միանվագ գումարներից, քանի որ քառյակը չունի համապատասխան ռեսուրսներ (տոմսային տնտեսություն, դահլիճ, համապատասպան ՊՌ մենեջեր, մարկետոլոգ) ինքնուրույն համերգներ կազմակերպելու համար: Ուստի համապատասխան ռեսուրսների և դահլիճի բացակայությունը հանգեցրել է նրան, որ քառյակը մշակել է դահլիճի պլանային և փաստացի միջին ծանրաբեռնվածության ցուցանիշների և դրանց հաշվարկման վերոնշյալ մեթոդաբանությունը, ինչը տարբերվում է այլ համերգային կազմակերպությունների մեթոդաբանությունից: Նշված մեթոդաբանությամբ աշխատելու համար կամ պետք է ունենալ համապատասխան ռեսուրսներ, կամ պետք է քառյակը կցել այլ համերգային կազմակերպության:»*

7.1.14 Նախարարության Ծրագիր 11-ում ընդգրկված «Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ում 2021թ. առաջին կիսամյակի

սաների թվի ընդհանուր աճը կազմել է 12, սակայն դրամարկղային ծախսը փաստացի ծախսին գերազանցել է 3,366.9 հազ. դրամով:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

Առարկություն. *«Կրեդիտորական պարտքերի մնացորդ և շրջանառություն չի հաշվառվել, քանի որ կրեդիտորական պարտքեր չի ունեցել:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում:

7.1.15 Նախարարության Ծրագիր 12-ում ընդգրկված «Երևանի թիվ 1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021թ. վեց ամիսների արդյունքներով կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման համար գնահատվող երեխաների թվաքանակն աճել է 72 երեխաներով (նախատեսված 70-ի փոխարեն՝ 142), իսկ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստացող երեխաների թիվը նվազել է 157 երեխաներով (նախատեսված 404-ի փոխարեն փաստացի 247): Նշված ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների արձանագրմամբ կրեդիտորական պարտքերի աճով պայմանավորված փաստացի ծախսերը դրամարկղային ծախսերին գերազանցել են 12,039.3 հազ. դրամով:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ընդունվել է ի գիտություն»

2021թ. վեց ամիսների հաշվեքննության ընթացքում արձանագրված թվով 16 անհամապատասխանությունների և թվով 15 այլ փաստերի վերաբերյալ Նախարարությունը Գրություն 2-ով (կցվում է) թվով 5-ն ընդունել ի գիտություն, տրվել են թվով 10 բացատրություններ և թվով 6 պարզաբանումներ: Ներկայացված թվով 10 առարկությունները հաշվեքննողները չեն ընդունել:

8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Թիվ	Առաջարկություններ	Ընդունել է/ Ընդունել չէ	Կատարված է/ Ընթացքում է	**Հիմնավորումներ** *(Նախարարության 2021թ սեպտեմբերի 3-ի թիվ 01/17.2/19454-2021 գրություն)*
1	2	3	4	5
1	Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տեղեկատվության վրա, մասնավորապես՝ ժամկետների, ամբողջականության, լիարժեքության, պահանջված ձևաչափերին համապատասխանության և ճշգրտության առումներով:	*Ընդունելի չէ*	*Ընթացքում է*	Հաշվի առնելով պահանջվող տեղեկատվության ծավալները, բազմազանությունը (պահանջվող տեղեկատվությունը հավաքագրելուն ընդգրված են եղել տարբեր ստորաբաժանումներ), դրանց տրամադրման համար սահմանված սուղ ժամկետները, ինչպես նաև այն, որ պահանջվող տեղեկատվության զգալի մասը հավաքագրվել է նախարարության ենթակա ՊՈԱԿ-ներից և նախարարությունը ոչ ժամանակ, ոչ էլ հնարավություն է ունեցել ստուգել ներկայացված տեղեկատվության ամբողջականություն ու ճշգրտությունը՝ եղել են ժամկետների խախտման և տեղեկատվության ոչ ամբողջական ներկայացման դեպքեր: Բացի այդ, նույն տեղեկատվությունը տարբեր ձևաչափերով պահանջելը ևս առաջացրել է լրացուցիչ խնդիրներ տվյալների ամփոփման գործընթացում: Ինչևէ, տվյալների չտրամադրման, ժամկետների խախտման, ոչ ամբողջական, թերի կամ ձևաչափերին ոչ համապատասխան տրամադրման որևէ միտում նախարարությունը չի հետապնդել, և, տարբեր մեկնաբանություններից խուսափելու նպատակով հետայսու առաջարկում է տվյալներ պահանջել պաշտոնական գրությամբ՝ հստակ ներկայացնելով ձևաչափ և սահմանելով ողջամիտ ժամկետներ:
2	Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջոցառումներ ձեռնարկել Նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող տեղեկատվության ամփոփագրերի և ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տվյալների	*Ընդունելի չէ*	*Ընթացքում է*	Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից մշակված և նախարարությունից պահանջվող անալիտիկ և սինթետիկ մակարդակների տվյալների ձևաչափերում ամբողջական արտացոլված չի լինում տվյալ ծրագրի մեջ ներառվող բոլոր հոդվածները (օրինակ՝ «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրի մեջ ներառված է «4637-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» և «4639-Այլ ընթացիկ դրամաշնորհներ»

	անալիտիկ և սինթետիկ մակարդակների ճշգրտության ապահովման վրա:			հոդվածներ և պալատը իր մշակված ձևաչափով նախարարությունից պահանջել է միայն 4637 հոդվածով ֆինանսավորվող Նախարարության ենթակայության կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն, մինչդեռ, բացի 4637 հոդվածից նախարարությունը 4639 հոդվածով ֆինանսավորում է նաև ՀԿ-երի): Հետևաբար ՀՀ հաշվեքննիչ պալատի և ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող տեղեկատվության ամփոփագրերի և ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տվյալների անալիտիկ և սինթետիկ մակարդակների միջև կառաջանա անճշգրտություններ:
3	Միջոցառումներ ձեռնարկել և ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնել Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի համար տարեկան ֆինանսավորումների համար բազային իրավական ակտեր ստեղծելու, նորմեր և գործակիցներ սահմանելու ուղղությամբ:	*Ընդունելի է*	*Ընթացքում է*	Հարկ ենք համարում նշել, որ Ծրագիր 1-ը և Ծրագիր 2-ը իր մեջ ներառելով բազմագործառութային կրթական ծրագրեր, նախարարությունը մշակել և շրջանառել է ՀՀ կառավարության որոշումներ, որոնցից որոշներն ընդունվել են, սակայն որոշներն էլ պարբերաբար մշակման և կատարելագործման կարիք ունեն: ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից պատրաստվել և շրջանառվում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ (ԿԱՄ) ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ԵՎ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 1330-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Այն ներկայումս տեղադրված է նաև E-draft կայքում՝ հանրային քննարկման համար: Նախագծով նախատեսվում է պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ հատկացնելու, ուսման վարձը փոխհատուցելու և կրթաթոշակ սահմանելու կարգը, միաժամանակ փոփոխություններ են եղել նաև «Նախնական մասնագիտական (արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-164-Ն օրենքում: Օրենքներն ընդունվելուց հետո կմշակվի նաև ենթաօրենսդրական ակտեր:

4	Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառման կատարման ժամանակացույց:	*Ընդունելի է*	*Ընթացքում է*	Վերոհիշյալ համապատասխան օրենսդրական փոփոխություններից հետո կսահմանվեն պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառումների կատարման ժամանակացույց:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Նախարարությանը.

9.1 Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տեղեկատվության վրա, մասնավորապես՝ ժամկետների, ամբողջականության, լիարժեքության վրա՝ պահանջված ձևաչափերի համապատասխանության և ճշգրտության առումներով:

9.2 Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջոցառումներ ձեռնարկել Նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող տեղեկատվության ամփոփագրերի և ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տվյալների անալիտիկ և սինթետիկ մակարդակների ճշգրտության ապահովման վրա:

9.3 Ձեռնարկել միջոցառումներ Նախարարության ենթակայության ՊՈԱԿ-ներում ՀԾ համակարգով հաշվապահական հաշվառման վարման լիարժեք և ամբողջական գործարկելու, իսկ մարզադպրոցներում՝ ներդրման, ուղղությամբ:

9.4 Նախարարության ֆինանսական ոլորտը կարգավորող և հիմնական կառուցվածքային մասնագիտական վարչությունների կանոնադրություններում, ինչպես նաև՝ կնքվող տարեկան պայմանագրերում սահմանել այնպիսի գործառույթներ և ընթացակարգեր, պահանջվող տեղեկատվություն և ամփոփագրեր, որոնց միջոցով լիարժեք կվերահսկվեն իրականացվող միջոցառումների արդյունքում համապատասխան պարբերությամբ ձևավորվող հաշվետվություններում ներկայացվող ֆինանսական և արդյունքին միտված, ոչ ֆինանսական ամփոփ ցուցանիշների արժանահավատությունն ու իրավասությունը:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դ. Չիբուխչյան